Հաշվետվություն

2023 թվականի մայիսի 28-ից հունիսի 2-ը Ամերիկայի Միացյալ Նահանգներ (Օռլանդո) կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**
   Սուրեն Թովմասյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Կադաստրի կոմիտեի ղեկավար

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   ԱՄՆ (Օռլանդո), 2023 թվականի մայիսի 28-ից հունիսի 2-ը

4. **Հրավիրող կողմը.**
   Չափագրողների միջազգային ֆեդերացիա (FIG)

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցություն Չափագրողների միջազգային ֆեդերացիայի (FIG) աշխատանքային շաբաթին

6. **Քննարկված թեմաները.**
   Աշխատանքային շաբաթի ընթացքում քննարկվեցին հետևյալ թեմաները.
   - Բաց երկրատարածական կոնսորցիումի (OGC) ստանդարտները,
   - Հողերի արդյունավետ կառավարմանը վերաբերող հարցեր,
   - Բաց (հասանելի) տվյալներ. նախաձեռնություններ և զարգացման հեռանկարներ,
   - Օդալուսանկարահանման իրականացումը անօդաչու թռչող սարքերի միջոցով. տեսություն, պրակտիկա, ստանդարտներ,
   - Օրենսդրական կարգավորումների դերը և նորագույն թվային տեխնոլոգիաների (AVM, BIM, Digital Twins) կիրառումը անշարժ գույքի շուկայի թափանցիկությունն ապահովելու գործում,
   - Սենսորային և տեղորոշման համակարգերի համակցում,
   - Չգրանցված հողամասերի գնահատման խնդիրներ,
   - Կլիմայական փոփոխություններին հարմարվելու ռազմավարության հնարավորություններն ու մարտահրավերները,
   - GNSS ռեֆերենց կայաններ և ցանցեր,

- Տեխնոլոգիական առաջընթացը տարածական տվյալների կառավարման ոլորտում. արդյունավետ տարածական պլանավորման սոցիալ-տնտեսական ազդեցությունը,
- Աշխարհագրական տեղեկատվական համակարգերի (GIS) մշակմանն ու կիրառմանն առնչվող հարցեր,
- Հողերի կառավարման թվայնացում. արհեստական բանականության և հեռազննման կիրառությունը հողերի կառավարման գործընթացում
- Ջրագրության (Hydrography) ստանդարտներ և ուղեցույցներ:

7. **Հանդիպումներ, ելույթներ, բարձրացված կամ քննարկված հարցեր.**

Տեղի ունեցան հանդիպումներ Նիդերլանդների, Շվեդիայի, Նորվեգիայի, Մոլդովայի պատվիրակների, ինչպես նաև Դելֆտի տեխնիկական համալսարանի ներկայացուցիչների հետ: Մասնագիտական հանձնաժողովների ղեկավարների հետ քննարկումների ընթացքում շոշափվեցին տարածական տվյալների կառավարման, չափագրության և տեղորոշման, անշարժ գույքի գնահատման, մասնագիտական կրթությանը և ստանդարտներին առնչվող, ինչպես նաև փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտային այլ հարցեր:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Չափագրողների միջազգային ֆեդերացիայի աշխատանքային շաբաթի բացման արարողության ընթացքում պաշտոնապես հաստատվեց Կադաստրի կոմիտեի անդամակցությունը կազմակերպությանը՝ որպես փոխկապակցված անդամ (Affiliate Member): Փոխկապակցված անդամի (Affiliate Member) կարգավիճակը հնարավորություն կընձեռի ընդլայնելու ասոցիացիայի շրջանակներում ծավալվող համագործակցությունը, ներկայացուցիչներ ունենալու մասնագիտական հանձնաժողովների կազմում, նոր գործընկերային կապեր հաստատելու այլ երկրների իրավասու մարմինների, կազմակերպության ակադեմիական անդամների հետ, օգտագործելու վերջիններիս լավագույն փորձը, փորձագիտական համայնքի ներկայացուցիչների կողմից առաջարկված նորարարական լուծումները՝ ի նպաստ Կադաստրի կոմիտեի կողմից նախաձեռնված ծրագրերի, բարեփոխումների արդյունավետ իրականացման շարունակականության ապահովմանը:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

Ասոցիացիայի աշխատանքներին մասնակցության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ընդգծվեց մասնագիտական հանձնաժողովների ընթացիկ գործունեությանը ՀՀ Կադաստրի կոմիտեի ներկայացուցիչների ներգրավման անհրաժեշտությունը: Մասնավորապես առաջարկվեց առաջիկայում կազմակերպել առցանց հանդիպումներ, վեբինարներ, որոնց ընթացքում համապատասխան հանձնաժողովների անդամների, փորձագիտական համայնքի ներկայացուցիչների միջև ծավալվող քննարկումներին և տեղեկատվության փոխանակմանը հնարավորություն կունենան նաև մասնակցելու Կոմիտեի մասնագիտական վարչությունների, ստորաբաժանումների աշխատակիցները:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

Սուրեն Թովմասյան 05.06.2023 թ.

«Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը Կադաստրի կոմիտե
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը ՀՀ վարչապետի 19.04.2023 թ. N 434-Ա որոշում
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը Սուրեն Թովմասյան Կադաստրի կոմիտեի ղեկավար
(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)
4. Գործուղման վայրը ԱՄՆ Օղանդո
5. Գործուղման ժամկետները 28.05.2023-02.06.2023թթ.
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)
   1. գիշերավարձ,
   2. օրապահիկ
   3. ճանապարհածախս

(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

■ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Անուն, ազգանուն 1*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը **Էկոնոմ դաս**	Սուրեն Թովմասյան	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	726.576	726.576
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	174 $	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	67.335	67.335
	Օրերի քանակը	5	
	Ընդամենը (դրամ)	336.673	336.673
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	98 $	

	Վճարը 1 օրվա համար (դրամ)	37,924	37,924
	Օրերի քանակը	6	
	Ընդամենը (դրամ)	227.544	227.544
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)			1,290.793

Գլխավոր քարտուղար Միեր Խաչատրյան

Ֆինանսատնտեսագիտական վարչության պետ/
գլխավոր հաշվապահ Գևորգ Սարդարյան